ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ /Հ.Հարությունյան/

<< ՈՒՋԱՆԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան պլան

2023-2024 ուս.տարի

Դասարան՝ 5-րդ

Դասղեկ՝ Ս.Մարգարյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (*դասարանի ընդհանուր բնութագիրը*): 2022-2023 ուտարում 5-րդ դասարանում սովորում է 26 աշակերտ:: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ:Ընկերասեր են, պատրաստ են օգնել իրար ցանկացած հարցում, դպրոց են հաճախում մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ: Կայացնում են միասնական որոշումներ, հարգում են ընկերների իրավունքները:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում: Հրավիրել ծնողական ժողովներ, հետևել մաքրությանը, փորձել նորովի աշխատել,գտնել և կիրառել դասավանդման այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ դասավանդման պրոցեսը դառնա հետաքրքիր և արդյունավետ: Զարգացնել ստեղծագործական ունակությունները, հնարավորություն տալ գործնականում կիրառել ստացած գիտելիքները: Ծնողների հետ տանել այնպիսի աշխատանքներ, որ նրանք աջակից դառնան դասղեկին թե՛ կազմակերպչական, թե՛ ուսումնադաստիարակչական հարցերում:Մեծ տեղ հատկացնել երեխաների ինքնաճանաչողությանը, ինքնուրույն գործելուն, անսովոր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու հարցում :

3. Հայեցի դաստիարակություն:

3.1. Հոգևոր դաստիարակություն: Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, կարևոր իրադարձություններին, ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, պատմել հայ ազգի, նրա մշակույթի, եկեղեցու և կրոնի մասին:Աշակերտների մեջ դաստիարակել ազգային հպարտություն :

3.2. ***Գեղագիտական դաստիարակություն:*** Գաղափար գեղեցիկի, բարու մասին, զարգացնել երեխայի ճաշակը, ստեղծագործական ակտիվությունը, երևակայությունը: Զրույցներ վարել հայ մշակույթի, գեղանկարչության մասին, ծանոթացնել ազգային մշակույթի արժեքներին:

3.3. **Ռազմահայրենասիրական դաստիարակություն.**

Աշակերտների մեջ դաստիարակել սեր, հպարտություն ազգի և հայրենիքի նկատմամբ: Գիտակցել տալ, թէ ինչ թանկ և անփոխարինելի է մեզ համար մեր հայրենիքը: Հասկացնել որ, հայրենիքի պաշտպանության, ազատության համար չպետք է խնայել նույնիսկ սեփական կյանքը:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն: Զրույցներ ֆիզկուլտուրայի դերի ու նշանակության մասին, դրա կարևորությունը առողջության պահպանման գործում: Զրուցել նաև սպորտում աչքի ընկած հայ մարզիկների մասին:

3.5. Աշխատանքային դաստիարակություն: Հետևել դպրոցի ու դասարանի մաքրությանը, դաստիարակել սեր դեպի աշխատանքը , հարգանք դեպի աշխատավորը : Հարգել ուրիշի աշխատանքը:

3.6. Բնապահպանական դաստիարակություն: Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ: Յուրաքանչյուր երեխա պարտավոր է հետևել շրջակա միջավայրի մաքրությանը: Բնապահպանական խնդիրները վերաբերում են և՛ մեծերին, և՛ փոքրերին:

4. ***Դպրոց-ընտանիք կապը:*** Ստեղծել ծնող-աշակերտ-ուսուցիչ-դպրոց համագործակցված կապը : Հրավիրել ծնողական ժողովներ: Զրուցել օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպման, ընտանիքի և դպրոցի կապի մասին:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Դպրոց իմ սիրասուն	01.09	Դասղեկ
2	Քննարկել վարքի,առաջադիմության,գլյքի պահպանման հարցեր	06. 09	Դասղեկ ՄԿԱ կազմ
3	Հայաստանի օրհներգ, զինանշան և դրոշ	21. 09	Դասղեկ
4	Իմ լավ ու բարի ուսուցչուհի	05. 10	Դասղեկ
5	Ժպիտը մարդու կյանքում	21. 10	Դասղեկ
6	Զրույց արվեստի,գեղեցիկի,բարու մասին	04. 11	Դասղեկ
7	Ինչ է ընկերությունը և բարեկամությունը	27. 11	Դասղեկ
8	Սպորտը իմ կյանքում	04.12	Ֆիզկուլտ ուսուցիչ Դասղեկ
9	Ես և շրջակա աշխարհը	11. 12	Դասղեկ
10	Երկրաշարժ, բնական աղետներ	05. 12	Դասղեկ
11	Սուրբ Ծննդյան խորհուրդը	25. 12	Զինղեկ
12	Զյուն , ձմեռ ու իմ երազանքները	15. 01	Դասղեկ
13	Մեր անունն է հայկական բանակ	26. 01	Դասղեկ

14	Մարդ, ում կուզեի նմանվել	04. 02	Դասղեկ
15	Աշխատանքն ազնվացնում է մարդուն	11. 02	Դասղեկ
16	Աշխատասիրություն և պատասխանատվություն	18. 02	Դասղեկ
17	Մեր փոքրիկ բարեկամները	25. 02	Դասղեկ
18	Գալդ բարի, գարուն	03. 03	Դասղեկ
19	Մայր իմ անուշ ու անգին	08.03	Դասղեկ
20	Ինչպես լինել լավ ընկեր	17. 03	Դասղեկ
21	Ով է իմ ընկերը	24. 03	Դասղեկ
22	Գրքեր, որ ես սիրեցի	01. 04	Դասղեկ
23	Ինչպես հասնել հաջողության	07. 04	Դասղեկ
24	Ճանաչենք մեր շրջապատի բնությունը	14. 04	Դասղեկ
25	Երաժշտությունն իմ կյանքում	24. 04	Դասղեկ
26	Հայաստանի սահմանները	05. 05	Դասղեկ
27	Մեր հաղթանակները	09. 05	Դասղեկ
28	Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր , վաղը	14. 05	Դասղեկ
29	Ինչպես դրսևորել միջավայրում , տրանսպորտում	18. 05	Դասղեկ
30	Իմ ծնողները	20. 05	Դասղեկ
31	Իմ իրավունքներն ու պարտականությունները	22. 05	Դասղեկ
32			
33	Զրույց՝ <<ինչպես եմ անցկացնելու ամառը>>	25. 05	Դասղեկ